

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒԿՐԱԽԼԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը եւ Ռկրաինայի արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ընդունելով երկու երկրների արդարադատության նախարարությունների միջեւ համագործակցության կարելոթությունը,
հաշվի առնելով երկու երկրների միջեւ գիտական, տեխնիկական, մշակութային եւ իրավական ոլորտներում համագործակցության դրական փորձը,
ձգտելով հաստատել գործընկերային կապեր երկու պետությունների արդարադատության մարմինների եւ հիմնարկների միջեւ,
նպատակ ունենալով առավել ամրապնդել հայ եւ ուկրաինացի իրավաբանների միջեւ փոխըմբռնումն ու բարեկամական համագործակցությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, հաշվի առնելով իրենց հնարավորությունները, կընդլայնեն համագործակցությունը արդարադատության եւ իրավունքի բնագավառում՝ հետեւյալ ձեւերով.

- 1) Կողմերի արդարադատության հիմնարկների միջեւ գործընկերային կապերի հաստատում,
- 2) քրեական, վարչական, տնտեսական, քաղաքացիական իրավունքի եւ դատավարության բնագավառներում օրինագծերի մշակման, ինչպես նաեւ այդ օրինագծերի գնահատման գործում փոխադարձ օգնություն,
- 3) երկու պետությունների արդարադատության մարմինների եւ հիմնարկների կազմակերպմանը եւ գործունեությանը ծանոթանալու նպատակով Կողմերի պատվիրակությունների փոխանակում,
- 4) Կողմերի արդարադատության ոլորտի աշխատողների եւ մասնագետների մասնագիտական որակավորման հետագա բարձրացման եւ պատրաստման ուղղությամբ համատեղ միջոցառումների (սեմինարներ, դասախոսություններ, գործնական պարապմունքներ) կազմակերպում եւ անցկացում՝ փոխադարձության հիման վրա,
- 5) Կողմերի պետությունների մասնակցությամբ իրավական օգնության մասին բազմակողմ միջազգային պայմանագրերի եւ այլ պայմանագրերի իրականացման գործում փորձի փոխանակում:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը կարող են կնքել նաեւ այլ համաձայնագրեր, որոնք կնպաստեն արդարադատության բնագավառում իրենց միջեւ համագործակցության զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերն իրականացնում են տեղեկատվության փոխանակում Կողմերի օրենսդրության եւ արդարադատության մարմինների ու հիմնարկների կազմակերպման ու գործունեության մասին, փորձի փոխանակում ազգային իրավական համակարգերի տեղեկատվայնացման բնագավառում, ինչպես նաեւ՝ այդպիսի տեղեկատվություն պարունակող տեղեկատվական համակարգերի ստեղծման եւ հանրային կամ էլեկտրոնային կապի հատուկ ուղիներով դեպի այդ համակարգեր մուտքի թույլտվություն կազմակերպելու գործում:

Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 4

Համագործակցության գծով համատեղ միջոցառումները ֆինանսավորելիս Կողմերը, եթե այլ կերպ չպայմանավորվեն, կհետեւեն այն սկզբունքին, որի համաձայն իրականացվող միջոցառումների շրջանակներում իր տարածքում կազմակերպական եւ գտնվելու հետ կապված ծախսերը կրում է ընդունող Կողմը, իսկ միջոցառման վայր մեկնելու եւ վերադառնալու ծախսերը՝ ուղարկող Կողմը:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ: Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով եւ հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Սույն Համաձայնագրի գործողության ոլորտին առնչվող հարցերով Կողմերի միջեւ վեճերն ու տարաձայնությունները կլուծվեն երկկողմ բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով եւ ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

Համաձայնագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից վեց ամիս անցնելուց հետո:

Կատարված է Երեւան քաղաքում, 2006 թվականի հոկտեմբերի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն եւ ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերն օգտագործելու են ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007 թ. հոկտեմբերի 30-ին: